

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՀԵՌԱՎԱՐ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

08.09.2020 14:33



Հարգելի փաստաբաններ,

Հրավիրում ենք ձեզ առցանց եղանակով (ZOOM հարթակով) մասնակցելու **10.09.2020թ. ժամը 18.30-ին** կայանալիք ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստին, որի շրջանակում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը կներկայացնի ՀՀ փաստաբանների պալատի առաջարկը «**Պատարանների կողմից դատական ծախսերի հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակ**»-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Նշված նախաձեռնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող գնացուցակը հաստատվել է դեռևս 26.12.2013թ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ 33/3-Լ որոշմամբ, որից հետո երկրում արձանագրված տնտեսական իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված փոփոխվել են նաև փաստաբանական վճարների չափերը, ուստի առաջ է եկել նոր գնացուցակ հաստատելու հարցը, որն առավել ճշգրիտ կարտացուցի փաստաբանական գործունեության վճարների միջին չափերը և հնարավորություն կընձեռնի դատարաններին դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը որոշելիս:

Առաջարկվող փոփոխությունների նախագիծը բեռնելու համար անհրաժեշտ է սեղմել [այստեղ](mailto:ani.gharibyan@advocates.am), իսկ գործող գնացուցակը ներկայացված է [հետևյալ հղմամբ](#).

- Նիստին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 10.09.2020թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:
- Նիստին նախապես գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի հրավեր (հղում), որի միջոցով կարող եք միանալ առցանց հարթակին:
- **Ակումբի նիստին մասնակցությունը փաստաբանի համար կհաշվարկվի 4 (չորս) ակադեմիական ժամ վերապատրաստում:**

Ուշադրություն. Պատրոնացի անցկացման ZOOM հարթակին միաժամանակ կարող է միանալ մինչև 100 մասնակից, ուստի գրանցման առաջնահերթությունը տրվելու է դատրոնացին առավել վաղ գրանցված 100 փաստաբանի:

Հետևապես՝ խնդրում ենք դատրոնացին գրանցվել միայն այն դեպքում, եթե համոզված եք, որ դատրոնացին մասնակցելու եք:

Ի գիտություն. ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող վերապատրաստման այլ դատրոնացների ընթացքում նախապես գրանցված մի շարք փաստաբաններ մուտք չեն գործել վերապատրաստման հարթակ, իսկ դատրոնացին ավելի ուշ գրանցման հայտ ներկայացրած փաստաբաններին՝ մասնակիցների սահմանափակ քանակով պայմանավորված, դատրոնացի հրավեր (հղում) չի ուղարկվել, ինչի արդյունքում վերջիններս հնարավորություն չեն ունեցել մասնակցելու դատրոնացին: Ուստի նման իրավիճակները բացառելու նպատակով սույն դատրոնացներին գրանցման հայտ ներկայացրած բոլոր փաստաբաններին կուղարկվի դատրոնացի անցկացման հարթակ մուտք գործելու հրավերը (հղումը), ինչի հետևանքով դատրոնացին մասնակցելու հնարավորություն կունենան նախատեսված ժամին համակարգ մուտք գործած առաջին 100

փաստաբանները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```